ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«09» մայիսի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆԻ ԵՎ ԵՐԿՐԱՊԱՀԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի հայրենակիցներ

79 տարի առաջ Հայրենական մեծ պատերազմին խորհրդային զորքերի կազմում փայլուն մասնակցություն ունեցան հազարավոր քաջ հայորդիներ, այդ թվում նաև ստեփանավանցիներ:

Այսօր մենք նշում ենք Հայրենական Մեծ պատերազմում մեր պապերի ու հայրերի կերտած փառահեղ հաղթանակի տոնը:

Արցախյան վերջին պատերազմից հետո պարզ է, որ նույն ոգևորությամբ չենք համակված, բայց հայրենիքն անսահման սիրելու մղումն ու հաղթելու կամքը պետք է լինեն մեր մշտական ուղեկիցները:

Ոչ մի հաղթանակ ու ոչ մի պարտություն վերջնագիր չէ, բոլոր պատերազմներում պետք է կռվել ու հաղթել ամեն օր:

Այսօր՝ մարտահրավերներով ու փորձություններով լի այս դժվարին ժամանակաշրջանում մենք առավել քան պարտավոր ենք լինել միասնական:

Սիրելի բարեկամներ, սիրով շնորհավորում եմ բոլորիս այս կարևոր տոնի առթիվ, նաև իմ խոնարհումն եմ բերում իրենց կյանքը հանուն մեր պետականության պահպանման նվիրաբերած հայորդիների հիշատակին:

Մաղթում եմ խաղաղություն և առատություն բոլոր ոլորտներում:

Միասնություն և ամուր կամք բոլորիս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ